

իրենց հետևորդներով, ինչպէս նաև Ս. Կոսթի նշյման Գերման վանքի տեսուչը՝ իր հետևորդ վարդապետներով:

✱ 22 Յուն. Կիր. — Ս. Գատրիարք տեղի ունեցաւ Մայր Տաճարին մէջ, ուր Ս. Գատրիարք Հայրը քարոզեց Աստուածայայտնութեան խորհուրդին վրայ, բացատրելով հոգևոր վերածնունդին հրօնաբարոյական իմաստը:

— Նախկին Հապէշ Նախարար մը, որ երուսաղէմ կը բնակէր, տօնական շնորհաւորութեան առթիւ այցելեց Ս. Գատրիարքին:

✱ 24 Յուն. Գշ. — Ս. Գատրիարքը, Տ. Մենուշ Սրբազանի և Տ. Շառաշ Վրդ.ի հետ այցելեց Երուսաղէմի Կաթափարիչ Վանք. Քիթ-Ռոչի:

✱ 26 Յուն. Եշ. — Ուրբո՛րէ՛, Հերաշփառ»ի արարողութիւն կատարուեցաւ ի Ս. Յարութիւն հանդիսապետութեամբ Տ. Մենուշ Արքեպի. ր որ և պատարագեց հանդիսիւ Քրիստոսի Ս. Գերեշմանին վրայ և քարոզեց:

Վերագործին՝ վանքի ուսող գունէն Միաբանութիւնը թափօրով և շէյոյ ի լուսոյի երգեցմամբ բարձրացաւ պատրիարքարան, ուր կատարուեցաւ Ս. Աթոռոյ տառնական Տնօրնէքը: Այս արարողութեան պատահաբար ներկայ զու-

նուեցաւ Երուսաղէմի գերման դաղուքին Պար երէցը, իր օգնականին հետ, որ շերմօրէն գնահատեց մեր եկեղեցական երաժշտութիւնը:

✱ 28 Յուն. Եր. — Ուսումն. Խորհուրդը այս առտու յատուկ նիստ ըրաւ. Սրբոյ Թարգմանչաց — Դուրեան Գրական Մրցանակի Ձորբօր Շրջանի բացման գործով: Այս նիստին մէջ ժողովը յուշեց Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոս Աղաւեստիի քահանայական յիշնամեայ յորեւեանը տօնել, և այս մասին առաջարկ տանել Տնօրէն ժողովոյ:

✱ 29 Յուն. Կիր. — Մայր Տաճարին մէջ քարոզեց Ս. Գատրիարք Հայրը, Յովնանէս Մկրտչի և Յիսուսի իմաստութեամբ և շնորհով լի մանկութեան մէջ մասնանշելով զքրիստոնէական մանկութեան շնորհաց դաղտները:

✱ 30 Յուն. Բշ. — Լատինաց Ս. Գատրիարքին պատահած արկածը ցաւով իմանալով Սրբազան Գատրիարքը, ցաւակցական և բարեմաղութանքի նամակ մը ուղղեց Ն. Ամենապատուութեան՝ իտալական Հիւանդանոցը:

✱ 31 Յուն. Գշ. — Տնօրէն ժողովը, ըստ առաջարկութեան Ուսումնական Խորհուրդի, այսօր իր հանգիստին ժամանակ այս ամսի տօնելու համար Գեր. Տ. Մկրտիչ Աղաւեստի Սրբազանի քահանայութեան յիշնամեայ յորեւեանը:

ԱԹՈՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ՅԱԿՈԲԱՆՏ

ԵՐՈՒՄԱՆԷՄ

ՌՈՍՈՒՄԵԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն կարգադրութեանց, որոնք մանրամասնուած են Ս. Աթոռոյ ՍիՆՆ Պաշտօնաթերթի ներկայ 1939 թուոյ Փետրուարի այս քիւին իր Յուշուած հրատարակուած Կանոնադրութեան մէջ, պաշիւ ունիմք բացուած յայտարարելու «Սրբոյ Թարգմանչաց — Դուրեան Գրական Մրցանակ» ի Ձորբօր Նրկամեակի Տարեօրհանը:

Մասնակցիլ փափաքողները կը հրաւիրուին ամենէն ուրբ՝ մինչեւ յառաջիկայ 1940 թուոյ Ապրիլ ամսոյ վերջը, իրենց գործերը նամակաւ յղել Ս. Աթոռոյ Ամենապաշիւ Սրբազան Պաշիւար Հօր, մեկնագրեալները՝ երկուական, իսկ ձեռագիրները մէկ մէկ օրինակ:

Այս Ձորբօր Նրկամեակի Շրջանի համար, ըստ է. յօդուածի նոյն Կանոնադրութեան, մասնակցողներն ազատ բոլուած են իրենց ըմբելու իրենց նիւթը. բաւական է որ Ս. յօդուածի մէջ նշանակուած ընդհանուր գիծերու շրջանակին մէջ լինի այն: Պէտք կը զգամք աւելցնելու միայն թէ նախապատուութիւն պիտի տրուի նախնեաց մատենադրութեան վերաբերեալ եւ բանասիրական բնոյթ ունեցող ուսումնասիրութեանց:

Ի դիմաց Ուսումնական Խորհրդոյ Ս. Աթոռոյ

Ասենադպիր

Ասենապէս

ՆԵՂԻՇԷՆ ՎՐԴ.՝ ՏԷՐՏԷՐԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԱՐԲԵՊՍ. ԱՂԱԽՆՈՒՆԻ

1 Փետր. 1939, Երուսաղէմ